Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Sир

Ширдмирлі
бичиму

85
Ш-99

1903

85
Տ-99

4734

ԵՒԳԻՆԷ ՏՈՒՐ

ՄԱՐԳԱՐՏԷ ՄԱՆԵԱԿ

Թարգմանեց

ՕՐ. ԴՈՒԱՐԴ

ԹԻՓԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտիրեանցի
1903

349
24 JUL 2013
-6 NOV 2011
85
Տ-99
կգ.

ԵՒԳԻՆԷ ՏՈՒՐ

ՄԱՐԳԱՐՏԷ ՄԱՆԵԱԿ

Թարգմանեց

ՕՐ. ՆՈՒԱՐԴ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՓԼԻԶ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1903

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го мая 1903 года.

ՄԱՐԳԱՐՏԷ ՄԱՆԵԱԿ

—

Շատ տարի առաջ Գրէնադա քաղաքում մի խելօք ծերունի հրեայ էր ապրում, որին ամենքը ճանաչում էին և որից ամենքն էլ վախենում էին. բայց վախենում էին ոչ թէ նրա համար, որ մէկին վնաս էր տուել, կամ որևէ անախորժութիւն պատճառել, այլ որովհետև ոչ ոքի հետ բարեկամութիւն չէր անում, ոչ ոքի հետ ազուհաց չէր ուտում, ապրում էր բոլորովին առանձնացած, հարևանների և ծանօթների դժբաղդութեանն անկարեկից։

Նրա տունը գտնվում էր քաղաքի հեռաւոր փողոցներից մէկի վրայ. տան մի կողմի պատուհանները պարտէզին էին նայում, միւսները դաւթին։ Ցաճախ կէս գիշերն անց նրա տան պատուհաններից ճրագի լոյս էր երևում, իսկ երկու պատուհաններում միշտ վառուած էր լինում ճրագը։ Եր-

բեմն այդ լոյսը սոսկալի էր թվում, որովհետև մոմերի սովորական լոյսի փոխարէն կարմիր բոցի ցոլք էր երևում, ու մէկ էլ յանկարծ՝ ինչ-որ անծանօթ լոյսի կապտաւուն փայլ. ներսը երբեմն երևում էր մի տարօրինակ բոյս, որ ինչպէս հրդեհ երբեմն բռնկում էր, երբեմն հանգչում. սակայն հրդեհ չկար. հետևեալ օրն ամեն մարդ կարող էր տեսնել պարտէզի տունը, որ նախընթաց օրուայ պէս խաղաղ էր և ամայի։ Եւ ուրիշ ոչ պէտք է երևար, կամ երևումուտ անէր։ Այդ տան մէջ ապրում էր Ծերունի հրեան իր միուռճար գեղանի աղջկայ և նրա զառամեալ դայեակի հետ։ Բայց գեղանի աղջիկը տանից երբէք չէր դուրս գալիս, ոչ ոքի հետ ծանօթութիւն չունէր, այլ մեն-մենակ զբօսնում էր իրանց ստուերախիտ պարտէզում։ Երբեմն միայն պարտիզպանն էր տեսնում նրան, երբ գալիս էր պարտէզի հաղուագիւտ ծաղիկները ոռոգելու, որոնց շատ էր սիրում հրեայի աղջիկը։ Պարտիզպանի վըկայութեամբ նա մի կատարեալ գեղեցկուհի էր — բարձրահասակ, վայելչակազմ, սևաչեայ, շրթունքներն ինչպէս ալ-կարմիր վարդ. մարդ չէր կշտանում նրան նայելուց։ Երկու շքեղ ծամ իջնում էին նրա սիրուն ու շիմշատ թիկունքի վրայից մինչև գոտկատեղը։ Նա միշտ զուարթ էր և բարի։ Հայրը

սիրում էր աղջկան անսահման սիրով. աշխարհիս երեսին այդ մի հատիկ աղջիկն ունէր. ուրիշ ոչ ոքի չէր սիրում և ոչ էլ ցանկանում էր սիրել։ Նրա ամուսինը վաղուց էր մեռել, որի մահից յետոյ նա իր բոլոր սիրտը նուիրել էր իր աչքի լոյս սիրասուն դաւակին։

Ամեն Աստծու առաւօտ Ծերունի հրեան նըստած էր լինում իր սենեակում, ուր ոչ ոք և ոչ մի պատրուակով չէր համարձակվում ներս մտնել, ոչ իսկ աղջիկը։ Ճաշից յետոյ հայրը մի ժամաչափ լսում էր աղջկայ մանկական շաղակրատութիւնները, որին երբէք չէր յանդիմանում, ոչ մի բանի համար չէր ճնշում նրան։ Լիան — այդպէս էր աղջկայ անունը — առանց շփոթուելու և առանց քաշուելու ամենայն վստահութեամբ պատմում էր հօրը իր ուրախութիւնը, տրտմութիւնը, հոգսերը և այն ամենը, ինչ որ նրա մտատպ գլխում ծնունդ էր առնում։ Սողոմոնը — Ծերունու անունն է — որ մի լուրջ, ծանրաբարոյ, խիստ և ամենքի համար անմատչելի անձնաւորութիւն էր, ներողամտաբար ժպտում էր Լիայի խօսքերի վրայ և շոյում նրա սիրուն գլուխը, երբ նա սկսում էր նոյնիսկ իր արած չարութիւնների մասին պատմել։ Դրանից յետոյ Սողոմոնը դարձեալ փակվում էր իր սենեակում և միայն երե-

կոյեան արևը մայր-մտնելուց մի ժամ առաջ դուրս էր գալիս պարտէզ Լիային հանդիպելու։ Հէնց որ մայր-մտնող արևի վերջին ճառագայթները ոսկեզօծում էին լեռների գագաթները, Սողոմոնը, օրհնելով աղջկան, փակվում էր իր սենեակում և մնում այնտեղ մինչև լոյս։

Ի՞նչ էր շինում նա այնտեղ, կը հարցնէ ընթերցողն ինձանից. սակայն այդ հարցը տուողը միայն դուք չէք։

Գրէնագայում՝ մեծ թէ փոքր, խելօք թէ յիմար, տգէտ թէ գիտուն, ամենքն էլ այդ հարցն էին առաջարկում՝ թէ իրանք իրանց և թէ միմեանց։ Անցորդները երբ կէս-գիշերին տան մօտից անցնելիս վանդակից տեսնում էին Սողոմոնի տան գաւթի ու փողոցի մերթ կարմիր, մերթ կապտաւուն շարագուշակ լոյսի մէկ բոցավառուելը և մէկ էլ յանկարծ հանգչիլը՝ երկիւղից խաչակնքում էին երեսներն և քայլերնին արագացնում, մրմնջալով. «Խա՛չ. օգնեա՛ ինձ»։

Ուրեմն ընթերցողն այլևս չի զարմանայ, եթէ ասեմ, որ Գրէնագայում սկսեցին նախ գաղտնի, ապա յայտնի կերպով խօսել, թէ Սողոմոնը կախարդ է և ուրեմն անհրաժեշտ է, որ ոստիկանութիւնը միջոցներ ձեռք առնէ իմանալու, թէ նա

ինչով է պարապում գիշերները իր սենեակում փակուած։ Բայց մինչդեռ բոլոր քաղաքացիները խօսում և դատապարտում էին Սողոմոնին, նա իր սովորական կեանքն էր վարում, առանց տեղեկութիւն ունենալու թէ քաղաքում իր մասին ինչ լուրեր են պտտվում։ Եւ լաւ որ այսպէս էր։ Մարդ վատ բան չպէտք է անէ, այդ հակառակ է թէ Աստծու օրէնքներին և թէ պատուի կանոններին։ Իսկ ինչ վերաբերում է մարդկային անմիտ բամբասանքներին, նրանք ուշադրութեան արժանի չեն։ «Գիւղացին և էշը» առակը գիտէք. եթէ չգիտէք, կարդացէք (տես եր. 45) և եթէ մի փոքր սրամտութիւն ունէք, կ'իմանաք առակի բուն միտքը։

Սակայն մենք վերադառնանք Սողոմոնին։ Նա լաւ գիտէր, որ ինքը ոչ ոքի վատութիւն չէր արել, ուստի ապրում էր հանգիստ։ Բայց իր աղջկանից զատ ուրիշ ոչ ոքի մասին չէր հոգում և չնայած իր հարստութեանը՝ ոչ ոքի լաւութիւն չէր անում, ոչ ոքի չէր օգնում։ Նա մոռացել էր, որ բաւական չէ մէկին վատութիւն չանել, այլ պէտք է աշխատել նաև լաւութիւն, այսինքն՝ բարութիւն անել նրան։ Բայց Սողոմոնն այդ մասին իսկի չէր էլ մտածում. նա մտածում էր միայն իր աղջկայ մասին, դէպի նա ունեցած սիրոյ և իր մեծ հարստութեան

մասին, որ թողնելու էր նրան իբրև ժառանգութիւն։ Աղջկանից յետոյ նա ամենից աւելի սիրում էր այն սենեակը, որի մէջ փակվում էր նա ցերեկուայ և գիշերուայ երկար ժամերին։ Արդեօք չէ՞ք կամենալ իմանալ, թէ ինչ կար Սողոմոնի այդ սենեակում։ Չէ՞ որ ես յանձնառու եղայ պատմել ձեզ, ընթերցող, ուրեմն «չգիտեմ» ասելով չեմ կարող ձեր ձեռքից պրծնել։ Պատմութիւն անողի առաջ ամեն դուռ իրան-իրան է բացվում, պատերն իրանք-իրանց վայր թափվում և պատմողը մտնում է ամեն տեղ, տեսնում է ամեն բան, որ յետոյ իր տեսածները հաղորդէ իր ընթերցողներին։

Սողոմոնի սենեակը մեծ էր և քառանկիւնի, երկու պատուհանով. մի ահագին սեղան դրուած էր սենեակի մէջտեղը, իսկ նրա վրայ մանդալներ—կրակարաններ, սրուակներ, կճուճներ, բրուղներ և զանազան մեծութեան ու ձևի՝ ապակէ, կաւէ, անագէ և պղնձէ անօթներ։ Նրանց մօտ խառնիխուռն ընկած էին մեծ ու փոքր, կարճ ու երկար, կեռ և ուղիղ մկրատներ, նշտարներ, ունելիներ, աքցաններ, դանակներ և գդալներ։ Պատերի երկարութեամբ դրուած պահարանների մէջ դետեղուած էին մեծ ու փոքր շշեր, սրուակներ, չորացած խոտերի ահագին կապուկներ և չոր փայտի կապոցներ։ Միւս պահարանների մէջ շարուած էին այնպիսի մեծ, ծանր, հաստ կաշեկազմ գրքեր, որ նրանց տեղից բարձրացնելու համար մեծ ոյժ էր պէտք։ Գրքերից միքանիսը ծածկուած էին փոշու այնպիսի թանձր շերտով, որ կարծես 20 տարուան ընթացքում նրանց ձեռք տուող չի եղել, միքանի գիրք ևս կիսաբաց դրուած էին սեղանների ու աթոռների վրայ, կարծես թէ մէկը՝ հէնց նոր, կարդալուց յետոյ, վայր էր դրել, միջոց չունենալով ծածկելու։ Մեծ սեղանի առաջ կար մի մեծ բազկաթոռ, իսկ անկիւններում փոքր սեղանների մօտ դրուած էին փոքր աթոռներ, որոնց հեշտութեամբ կարելի էր մի տեղից միւսը տեղափոխել։ Սողոմոնի սենեակը ոչ մաքուր էր և ոչ կարգին, բայց նա այդ բանի վրայ մտածելու իսկի ժամանակ չունէր։ Նա առաւօտից մինչև ճաշ, ճաշից մինչև երեկոյ և նոյնիսկ ընթրիքից մինչև լոյսը բացուելը անդադար դրաստած էր մերթ իր գրքերով, մերթ կրակարանների ու անօթների մօտ որևէ գործ շինելով։ Երևի դուք ինքներդ էլ արդէն դուշակեցիք, որ Սողոմոնը գիտական քիմիկոս էր։ Նա գիտէր թէ տարբեր-տարբեր նիւթերն ինչպէս պէտք է եփել, շիկացնել և չորացնել զանազան սրուակների ու տակառիկների մէջ. երբեմն

հողախառն մի սև զանգուածից նա գոյացնում էր իսկական փայլուն արծաթ, երբեմն՝ ըստ երևութին, նույն զանգուածից, միայն գույնը մոխրանման, զանազան գույնի թափանցիկ քարեր էր ստանում, երբեմն էլ միևնույն անօթների մէջ դրուած զանգուածից, նույնիսկ առանց կրակի օգնութեան, ստացվում էին բազմազան գեղեցիկ բիւրեղներ և էլի ուրիշ շատ ու շատ բաներ, որ մի առ մի թուելը դժուար է։ Բայց այսպիսի մեծ գիտութիւն ունենալով հանդերձ, Սողոմոնը ոչ ոքի մասին չէր հոգում, ոչ ոքի չէր օգնում. եթէ նա մի հիւանդ էր տեսնում, մոքովն անգամ չէր անցկացնում բժշկել նրան. եթէ աղքատ էր տեսնում, չէր էլ մտածում նրան դրամ տալ։ Թէ իր գիտութիւնը և թէ դրամը նա պահում էր միայն իր համար, առանց ուրիշներին բաժին հանելու։

Մէկ անգամ իրիկնադէմին Սողոմոնը զբաղուած էր գործանոցում. նա երկաթի թելեր էր ձգում՝ վրան զանազան սրուակներ յարմարեցնելով, յետոյ էլ ամրացնելով մի մեծ մեքենայի վրայ, մի ինչ-որ բաղադրութիւն քսեց ապակէ մեծ անիւի մօտի ձողին և սկսեց երկար կարդալ ու մտածել։ Արդէն մթնում էր։ Վերջապէս նա վեր կացաւ, ուղղուեց, ձեռքը դիպցրեց մեքենայի ապակէ մեծ անիւին և

սկսեց պտըտացնել ու այդպէս շարունակեց... և մէկ էլ յանկարծ... Սողոմոնն ինքն էլ վախեցաւ և մի կողմ թռաւ... Երկաթէ թելի վրայով մի կապոյտ կայծ սահեց, յետոյ երկրորդը, երրորդը...։ Նա դադարեց անիւը պտըտացնելուց. անիւը կանգ առաւ, կայծերն էլ դադարեցին։ Սողոմոնը ձեռը տուաւ թելին և ցնցուեց. նա զգաց, որ իր ամբողջ մարմնովն անցաւ այդ ցնցումը։ Նա երկար ժամանակ կանգնած էր մտածմունքների մէջ ընկղմուած։ Յետոյ մօտեցաւ, կրկին սկսեց պտըտել ապակէ անիւը, կրկին կայծեր երևացին։

Նա կրկին ձեռքը դիպցրեց երկաթէ թելին և կրկին ցնցուեց առաջուանից աւելի սաստիկ։ Նա յետ քաշուեց և յուզուած աղաղակեց.

«Ահա, ահա թէ ի՜նչ էի փնտռում այսքան ժամանակ. այս ոյժը մեծ ոյժ է. սա մեծ փոփոխութիւններ առաջ կը բերէ ամբողջ աշխարհում։ Ես թափանցեցի բնութեան գաղտնիքների մէջ։ Նա ինձ համար այլևս գաղտնիքներ չունի. ես ամեն բան գիտեմ, իսկ ինչ որ դեռ չգիտեմ, շուտով կը գիտենամ։ Աստուած ստեղծեց երկնքի և աներևոյթ աշխարհը, իսկ ես կը գտնեմ նրա օրէնքները. ես կը թափանցեմ բոլորը և ամենակարող խելքովս ինձ

կը հնազանդեցնեմ բոլոր զօրաւորը՝ մինչև այժմ անյայտ ոյժերը»։

Վերջապէս Սողոմոնը՝ իր գիտութեամբ զուարզացած և իր փորձերի յաջողութիւնից խսլառ կուրացած, բացականչեց.

«Ես հաւասար եմ Աստծուն. Նա ստեղծեց, իսկ ես հասկացայ և գտայ։ Այո, ես Աստծուն հաւասար եմ»։

Սողոմոնը հազիւ էր արտասանել այդ յանցաւոր բառերը, որ նրա գործանոցի դուռը ամուր բաղխեցին. բաղխում էին ուժգին և մոլեգնութեամբ։

Սողոմոնը այնպէս յափշտակուած էր իր մտքերով, այնքան ուրախացած էր իր նոր գիւտով, որ չէր լսում, թէ ինչպէս սաստիկ բաղխում էին իր գործանոցի դուռը։ Վերջապէս երբ բաղխիւնը աւելի և աւելի սաստկացաւ, նա սթափուեց և զայրացած գոչեց.

—Ո՞վ է համարձակվում ինձ անհանգիստ անել, ինձ չփոթել։

—Ես եմ, Սառան, լսուեց Լիայի դայեակի ձայնը։

—Հեռացիր, հեռացիր, յիմար պառաւ, այսօր

ձեզի քեզ կ'արձակեմ, բացականչեց Սողոմոնը բարկութիւնից դողալով։

—Ի՞նչպէս համարձակուեցիր ինձ անհանգիստ անել։

—Սողոմոն, Սողոմոն, աղաղակում էր դայեակը դռան ետևից և նրա բեկբեկուող սուր ձայնը վրկայում էր նրա երկիւղի և յուզմունքի մասին։

—Իմ Լիան, զաւակս... քո Լիան... քո զաւակը մեռնում է, մեռաւ։ Լսում ես, մեռաւ, ասում եմ քեզ... մեռա՜ւ։

Խեղճ հայրը տեղնուտեղը կենդանի արձան կտրուեց. կարծես նա չէր հասկանում պառաւի արտասուախառն արտասանած բառերի սոսկալի իմաստը։

Սողոմոնը բաց արաւ դուռը։ Յուզուած Սառան կանգնած էր շեմքի վրայ. նա փետում էր իր ալեոր մազերը և ձեռքով կուրծքը ծեծում։ Ծերունի հրեան, տեսնելով նրա յուսահատութիւնը, ուշքի եկաւ, արագ դուրս թռաւ իր գործանոցից, ուժով հրեց Սառային, աշխոյժ պատանու նման անցաւ միքանի սենեակ, բաց արաւ դուռը և ներս ընկաւ աղջկայ սենեակը։ Այդ այն սենեակն էր, որի պատուհանները բացվում էին դէպի պարտէզ։ Արևի առաւօտուայ ճառագայթները ծած-

կուած փեղկերից թափանցում էին ներս և ընկնում բարձր, մեծ, թուխ փայտէ անկողնու վրայ, որ զարդարուած էր կապոյտ վարագոյրներով և ոսկրոնն սիւնակներով։ Այդ մեծ անկողնի վրայ անշարժ և ըստ երևոյթին անկենդան ընկած էր տասնուվեց տարեկան ծաղկահասակ Լիան։ Նրա ձիւնի նման սպիտակ ձեռքերը անշարժ տարածուած էին, իսկ սաթի պէս սև, գանգուր վարսերը փռուած էին սպիտակ վզի և ձեռների վրայ։ Լիան հագին ունէր սպիտակ զգեստ, որ նրան աւելի հանգուցեալի էր նմանեցնում։ Խեղճ հայրն ընկաւ աղջկայ վրայ, բռնեց նրա սառած ձեռքերը, ականջը դրաւ նրա կրծքին և յանկարծ խայթուածի պէս վեր թռաւ. նրա դժգոյն այտերը կարմրեցին։

«Նա մեռած չէ. նա շնչում է, նրա սիրտը բաբախում է, ես կը բժշկեմ նրան... ինձ համար ամեն բան կարելի է», աղաղակեց նա անսպասելի ուրախութիւնից յուզուած։

Սառան, որ նոյնպէս կարողացել էր ներս ընկնել, մօտ վազեց Լիային և նոյնպէս ականջը դրաւ սանուհու կրծքին։

—Այո, այո, նա շնչում է, աղաղակեց նա, դառնալով Սոլոմոնին, որ արդէն անյայտացել էր սենեակից։ Մի քանի րոպէից նա շտապով վերադարձաւ, հետը բերելով ապակեր, օծանելիքներ և ուրիշ զանազան դեղեր։ Սոլոմոնը հնուտ բժիշկ էր, նա սկսեց դեղերով շփել աղջկան. շփում էր նրա քունքերը, շնչել էր տալիս զանազան ոգելից հեղուկներ. նա հանեց աղջկայ կօշիկներն ու գուլպաները և սկսեց նրա ոտները ևս շփել այնպիսի կծու հոտ ունեցող դեղերով, որ թէ ինքը և թէ նրան օգնող Սառան շնչասպառ էին լինում և հազում։ Բայց Լիան էլի անշարժ պառկած էր, նրա շնչառութիւնը ամենևին չփոխուեց։ Նա շնչում էր թէև կանոնաւոր, բայց կամաց, հազիւ նկատելի կերպով։

Կասկած չկար, որ Լիան մեռած չէր, բայց և այնպէս չնայած հօր և դայեակի բոլոր ջանքերին՝ ուշքի չէր գալիս, չէր կարողանում կենդանանալ։ Հայրն ու դայեակը միքանի ժամ շարունակ չարչարուեցին նրան ուշքի բերելու, սակայն նա նոյն դրութեան մէջ մնաց։ Վերջապէս ծերունի Սոլոմոնն ոյժից ընկաւ. բայց չնայած յոգնածութեանը, նոյն աշխուժութեամբ կրկին գնաց նա գործանոց և այնտեղից բերաւ ուրիշ սրուակներ և սկսեց նորից շփել Լիային, բայց այդ էլ չօգնեց։ Այն ժամանակ նա ջրի մէջ կաթեցրեց ինչ-որ կաթիլներ և աշխատեց բանալ Լիայի պինդ սեղմուած ատամները՝ կենդանարար բալասանը Լիայի բե-

ռանն ածելու հրամար. սակայն չնայած իր բոլոր ջանքերին, նա չկարողացաւ բանալ աղջկայ սեղմուած ծնօտները։ Հրեան խոր մտածմունքի մէջ ընկաւ։ Ցխուր էին նրա մտածմունքները։

Խեղճ հայրը ձեռքերը ծալած կանգնած էր իր ուշաթափ աղջկայ առջև, խոհուն աչքերը անշարժ յառած նրա վրայ։ Մի քանի ժամանակից նա սթափուեց և կրկին շտապով գնաց իր գործանոցը։ Դողդոջուն ձեռներով նա շտապ-շտապ սկսեց քրքրել գըրքերը, դուրս քաշեց ահագին հաստափոր հատորները և սրտատրոփ սկսեց թերթել նրանց՝ ժամանակից դեղնած և փոշով ծածկուած թերթերը, յետոյ պէտք եղած տեղը գտնելով, խորասուզուեց ընթերցանութեան մէջ։ Երկար ժամանակ կարդաց ու մտածեց, յետոյ տեղից վեր թռաւ և վառեց իր հնոցը։ Մի մեծ պղնձի մէջ սկսեց զանազան տեղօրայք ածել, ժամանակ առ ժամանակ նայելով գըրքին. մէջը գցեց նաև տեսակ-տեսակ խոտեր, վրան ցանեց փոշիներ, ապա այդ բոլորը միասին սկսեց եփ տալ։ Երկար ժամանակ նա կարդում էր, երկար գդալով խառնում պղնձի մէջ եփուող դեղը. կռանալով ուշի-ուշով հոտոտում էր, համը տեսնում և վերջապէս կէսօրին մօտ նա հանդարեց կրակը, պղինձը վերցրեց վառարանի վրայից և դրեց սա-

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А. Публичная Библиотека
7/XI-1922
Ереван, Абовяна
Ա. ԱԲՈՎՅԱՆ

ռը նկուղի մէջ։ Յետոյ գնաց աղջկայ որպիսութիւնն իմանալու։

Աղջիկը նոյն դրութեան մէջ էր։ Սողոմոնը նրան նորից զննելուց յետոյ լռութեամբ և բեկուած սրտով գնաց սառած դեղը բերաւ։ Նա կանչեց Սառային և նրա հետ միասին սկսեց խնամքով շփել աղջկան. բայց այդ ևս չօգնեց։

Սողոմոնը կրկին գնաց գործանոց. նա կրկին սկսեց քրքրել իր գրքերը և կարդալ. նորնոր դեղեր եփեց ու պատրաստեց և կրկին նոր յոյսով եկաւ աղջկայ մօտ... սակայն ի զուր. աղջիկը մեռելի նման անշարժ պառկած էր։

Այդպէս անցաւ երեք սոսկալի օր և երեք գիշեր... Դժբաղդ հայրը ոչ ուտում էր, ոչ խմում, ոչ քնում, այլ շարունակ կարդում, դեղեր էր եփում և դրանցով աղջկայ ամբողջ մարմինը շփում. սակայն բոլորն էլ անօգուտ։ Այն ժամանակ վեր առաւ գլխարկն ու ձեռնափայտը և գնաց քաղաք։ Ճանապարհաւ երկու հրեայի հետ, որոնք գիտնական քիմիկոսներ էին և նոյնպէս բժշկի համբաւ էին վայելում քաղաքում։ Նրանք էլ Սողոմոնի նման, իրանց բոլոր կեանքը նուիրել էին գիտնական հետազօտութիւնների, նրանց նոյնպէս յայտնի էին ամեն տեսակ խոտերի յատկութիւնները։ Սող-

մոնը նրանց տարաւ աղջկայ սենեակը։ Նրանք երկար ժամանակ նայեցին աղջկան, ականջ դրին նրա կանոնաւոր շնչառութեանը, աշխատեցին տաքացնել նրա ձեռքերը, յետոյ նստեցին նրա անկողնի մօտ։

—Դէ, ինչ կ'ասէք, հարցրեց դժբաղդ հայրը դողդողուն ձայնով։

—Կեանքումս դեռ չեմ տեսած այսպիսի հիւանդութիւն, ասաց գիտնականներից մէկը։—Դու դործ ես դրել բոլոր ինձ յայտնի միջոցները, և ես չգիտեմ թէ ուրիշ էլ ինչ խորհուրդ տամ քեզ։

—Մի շատ հին գրքի մէջ գրուած է մի օրիորդի մասին, որ ուշաթափ դրութեան մէջ մնացել էր միքանի օր. բոլոր ձեռք առնուած միջոցներն անօգուտ էին անցել, բայց ուշադնացութեան ութերորդ օրը նա ուշքի է եկել ինքն-իրան. դուցէ նոյնը պատահի և քո Լիային, ասաց միւս գիտնականը։

—Բայց իմ դործածած միջոցներից արդեօք դուք ուրիշը չդիտէք, հարցրեց հրեան։

—Մենք ոչ տեղից կարող ենք գիտենալ, քանի որ ինքդ չդիտես, ասացին երկու գիտնականները միաբերան։

—Դու մեղանից գիտուն ես և մենք քեզ էինք դիմում խորհուրդ հարցնելու, աւելացրեց նրացից մէկը։

—Այո, հաստատեց միւսը ծանրութեամբ, մենք քեզ մեր ուսուցիչն ենք համարում։ Բայց ինչ արած, երևի բնութեան մէջ դեռ չպարզուած շատ դաղտնիքներ կան, որոնք յայտնի են միմիայն Նրան, Ով ստեղծել է ամեն բան և պարդևել է մեզ բանականութիւն, Որի շնորհիւ մենք պարզում են շատ բան և ձգտում հետազօտել ամեն բան։

Ծերունի Սողոմոնը, ըստ երևութին, անվրդով լսեց իր բարեկամների խօսքերը, երկուսին էլ մնաս բարով ասաց, ճանապարհ դցեց մինչև բակի դուռը և կրկին փակուեց իր դործանոցում։ Միքանի ժամից յետոյ նա դուրս եկաւ այնտեղից. սակայն այս անդամ ձեռքին բռնածը սպիրտ կամ դեղ չէր, այլ մի ինչ-որ գիրք։ Երկար ժամանակ իր աղջկայ դլխավերևը կանգնած նա խորհրդաւոր խօսքեր էր փընթփընթում և այդ խօսքերն արտասանելիս ուշադրութեամբ դիտում էր Լիայի դժդոյն դէմքը, բայց նա անշարժ պառկած էր։ Կանոնաւոր, բայց թոյլ շընչառութիւնը հազիւ էր բարձրացնում նրա կուրծքը։ Ծերունի Սողոմոնը դողաց ու սարսռաց և բոլորովին յուսահատուած ընկաւ իր սիրելի աղջկայ վրայ, գրկեց նրան և երեխայի պէս լաց եղաւ։

«Լիա, դաւա՜կս, ասում էր նա ամուր սեղմելով նրան իր կրծքին, ուշքի եկ, ինձ նայիր։ Մի-

թէ չես լսում որ քեզ կանչում եմ, մի՞թէ չես տեսնում իմ արտասուքները և չես հասկանում իմ յուսահատութիւնը։ Էլիա, սիրելի զաւակս, կե՞անքս»...

Բայց Էլիան անձայն ու անշարժ պառկած էր։ Թշուառ հօր արտասուքները հեղեղի պէս հոսում էին դժգոյն այտերի վրայով։ Ձուր էին հօր համբոյրները, փաղաքշալից խօսքերը և ջերմը արտասուքը։ Վաղուց չէր, որ երբ հայրը նրան ձայն էր տալիս, նա վազում գալիս էր և փաթաթվում հօր վզովը, համբուրում նրան, սիրելի հայրիկ անուանում և ասում, թէ աշխարհիս երեսին նրան սիրում է ամեն բանից աւելի, նոյնիսկ իր կեանքից էլ աւելի։

Յուսահատուած և լքուած աղջկանն ուշքի բերելու շարունակ ջանքերից և անքուն գիշերներից հալումաշ եղած ու թուլացած ծերունի Սողոմոնը անյոյս, դանդաղ վեր կացաւ աղջկայ անկողնի մօտից, մի անգամ ևս համբուրեց աղջկայ անդգայ ձեռքը և երերալով գնաց իր սենեակը։ Խեղճ ծերունին միայնակ մնալով, նոր հասկացաւ իրան հասած դժբաղդութեան բոլոր ծանրութիւնը։ Նա համոզուեց, որ իր գիտութիւնն էլ, իր արուեստն էլ անկարող են օգնել իր սիրելի աղջկան։ Նա ամեն բան փորձեց, բաց բոլորն իզուր։ Նա մի առ մի մաաբերեց կարդացած բոլոր գրքերը, հաւաքած խոտերը, բաղադրած հեղուկները և հասկացաւ, որ մարդկային օգնութիւնն անզօր և անկարող է վերակենդանացնելու իր աղջկան... Նա հասկացաւ, որ այդ բանը ոչ ոք չի կարող, բացի Նրանից, Որին ամեն բան մատչելի է և ամենակարող է։

Սողոմոնը դառնագին լաց եղաւ և ծունկ չոքեց.

«Տէր,—աղերսեց նա թէ լեզուով, թէ սրտով, թէ խելքով և թէ իր ամբողջ էութեամբ,—Տէր, վերադարձրու ինձ իմ աղջիկը, տուր ինձ նրան։ Տէր ամենակարող, ես մեղանչեցի Քո առաջ, ես հպարտացած էի, միայն ինքս ինձ էի սիրում. բայց Դու, որ ամենաբարի ես, մի յիշիր իմ մեղքը, ներիր ինձ և վերադարձրու, տուր ինձ իմ ուրախութիւնը, հոգուս հատորը»։

Սողոմոնը երկար, երկար միջոց չոքած մնաց. նրա ալեոր գլուխը խոնարհել էր գետին և վշտից խոնջացած, շարունակում էր աղերսել Աստծուն։ Արտասուքը թեթևացրեց նրա ճնշուած սիրտը։ Նա վերկացաւ, հպիւ հասաւ իր անկողնին և ոյժից ընկած, յոգնած ու լքուած ընկաւ նրա վրայ։ Քունը փակեց նրա աչքերը և նա բաւական ժամանակ թմրութեան մէջ ընկաւ։

Այնուհետև նա երկար և խոր քուն եղաւ։ Լու-

սաղէմին նա մի երազ տեսաւ. նրան թվում էր թէ մօտը կանգնած է մի հրաշալի, լուսափայլ երիտասարդ թէ ոգի, մեծ-մեծ բիւրեղի նման թափանցիկ և ձիւնի նման սպիտակ թևերով։ Հրեան չէր կարող տեսնել նրա երեսը, բայց զգում էր, որ նա չքնաղ է։ Նրա վայելուչ մարմինը պատած էր ամպից ու մշուշից հիւսած ձիւնափայլ անուշահոտ հագուստով։ Նա ոչ կանգնած էր, ոչ գնում էր և ոչ էլ թռչում, այլ, զարմանալի բան, առանց ոտները գետնին դիպցնելու մնում էր օդի մէջ։ Ծերունին դեռ էլի ճիգն էր թափում ոգու դէմքի գծերը տեսնելու, և մէկ էլ յանկարծ նրա գլխավերև հնչեց մի այնպիսի քնքուշ և ներդաշնակ ձայն, որի հետ չէր կարելի համեմատել ոչ մի քաղցրանուագ համերգ, ոչ մի երաժշտութիւն չէր կարող այդպիսի զօրութեամբ թափանցել մարդկային հոգու խորքը։ Չքնաղ ոգու խօսքերը հոսում էին ինչպէս վճիտ աղբրի ջուր և հնչում որպէս անոյշ մեղեդի։

«Քո աղօթքը լսելի եղաւ, Ծերունի։ Քո տառապանքն ու սրտի հեզութիւնը գնահատուեց։ Աղջիկդ քեզ վերադարձրած կը լինի, երբ դու կը կապես նրա վզից քո ձեռքով շինուած մարգարտէ մանեակ։ Ահա քեզ արկղ, դու պէտք է այդ լցնես մարգարիտներով։ Ձեռք բեր, պատրաստիր այդ մարգարիտները և դրանցով լցրու այս արկղը և քո աղջիկը փրկուած կը լինի։

Երբ ոգին լռեց և շարժեց իր ձիւնի նման սպիտակ և բիւրեղի նման թափանցիկ թևերը, նրան պատող սպիտակ մշուշը շարժուեց և քիչ-քիչ անտեսանելի դարձաւ. նրա հետ անհետացաւ նաև չքնաղ տեսիլը։ Սողոմոնը ցնցուեց և զարթեց։ Նրա ննջարանում դեռ տեսանելի էր մի պայծառ, սպիտակ և հետզհետէ անյայտացող լուսոյ ճառագայթ, գոնէ այդպէս էր թվում նրան։ Նրա շուրջը սփռած էր մի տեսակ անոյշ բուրմունք, իսկ օդի մէջ տարածուած էր մի անիմանալի երաժշտութիւն։ Սողոմոնը ձեռքը տարաւ ճակատին, յետոյ երկու ձեռքով բռնեց գլուխը։ «Այո, այս երազ է. բայց ի՞նչ տարօրինակ երազ», ասաց նա ինքն իրան։

Սողոմոնն ուզում էր հանդարտուել, բայց չէր կարողանում ինքն-իրան գալ։ Նա ագահութեամբ շնչում էր առաւօտեան օդը և նրան թվում էր թէ նոյն անոյշ բուրմունքը տարածուած էր իրան շրջապատող մթնոլորտում, իսկ երաժշտութիւնն ու թեաւոր ոգու խօսքերը դեռ հնչում էին իր ականջին։

Լոյսը բացվում էր. մէկ էլ յանկարծ Սողոմոնի հայեացքն ընկաւ մի փոքրիկ քթախոտի տուփի նման արկղիկի վրայ, որ դրուած էր մահճակալի մօտ սեղա-

նի վրայ։ Արկղիկը շինուած էր շատ օտարոտի սպի-
տակ նիւթից, որ նման էր սատափի և օպալի։ Սո-
ղոմոնը իր օրումը չէր տեսած այդպէս բան, որի
սպիտակ շերտերի մէջ արևի ճառագայթները խա-
ղում-շողշողում էին ամեն գոյներով. կարծես այդ
անյայտ մետաղի մէջ ամփոփուած էր ծիածա-
նը։ Սողոմոնը երկար միջոց նայեց աղկղին, վերջա-
պէս ձեռքը մեկնեց և վեր առաւ։ Նա զննում էր
նրան, իսկ ծիածանը շողշողալով խաղում էր արկղի-
կի ամեն կողմերից։ Սողոմոնը բաց արաւ արկղիկը, որ
դատարկ էր. նա կրկին սկսեց հետաքրքրութեամբ
զննել։

«Զարմանալի բան, շատ զարմանալի։ Ո՞րտեղից
է այս արկղիկը, ո՞վ դրաւ այստեղ։ Ես երբէք այս
տեսակ արկղիկ չեմ ունեցած։ Գուցէ Լիայինն է
պատկանում. բայց ոչ, ինձ յայտնի է Լիայի ունե-
ցած-չունեցածը»։ Վերջապէս Սողոմոնը՝ իր ենթա-
դրութիւնները սպառելով, բարձրաձայն կոչեց. «Սառա,
Սառա»։

Դայակը ներս մտաւ շտապով, բայց բարկա-
ցած և դժգոհ։

—Այս ինչ է. դեռ չէ լուսացել, իսկ դուք ըս-
կսել էք բոլոր ուժով աղաղակել. չէ՞ որ խեղճ երե-
խան կարող է վախենալ։

—Լիան զարթեց, ուշքի՞ եկաւ, հարցրեց Սո-
ղոմոնը ցնցուելով և անկողնից վեր թռչելու պատ-
րաստ։

—Տես թէ ինչե՞ր է մտքիցն անցկացնում.
մի՞թէ ես չէի զարթեցնի քեզ. իմ անուշիկը էլի
թմբութեան մէջ է. ննջում է։ Ես ամբողջ գիշերն
անցկացրի նրա մօտ անշարժ նստած։ Մեռելի
նման պառկած է, միայն շնչում է։

Սողոմոնը հառաչեց.

—Ո՞վ դրաւ ինձ մօտ այս արկղը, հարցրեց
նա, ցոյց տալով դայեակին հրաշալի արկղիկը։

—Ես չեմ դրել. ես իմ օրում չեմ տեսած այդ-
պիսի բան. ի՞նչ սքանչելի արկղիկ է։

—Արդեօք Լիային չէ՞ պատկանում։

—Ի՞նչը, հարցրեց պառաւը շփոթուած։

—Ի՞նչպէս թէ ինչը. պարզ է որ այս արկղի-
կը։ Ես հարցնում եմ թէ տեսել ես այսպիսի արկղիկ
Լիայի ձեռքին։

—Է՛հ, խելքիդ վրայ չես, տէր իմ, ճշմարիտ
խելքիդ վրայ չես։ Ախար նա ո՞րտեղից կարող էր
ունենալ այս հրաշալի արկղիկը։ Ինչ-որ Լիան ունի՝
բոլորն էլ դու ես ընծայել նրան։ Եւ ո՞րտեղից կա-
րելի է ձեռք բերել մի այսպիսի գեղեցիկ արկղիկ։
Կարծեմ ամբողջ Սպանիայում չի ճարուի սրա

նմանը. յակինթի պէս վառվում է, ծիածանի պէս շողշողում, աստղի նման փայլում, ասում էր դայեակը և չնաչխարհիկ արկղիկի վրայ նայելուց չէր կշտանում։ Լաւ պահիր սրան, բարեկամս, սա մի անգին բան է, լաւ պահիր, գուցէ սա քեզ բաղդաւորութիւն բերէ։

—Ոչ ոք չէ՞ մտել այստեղ, հարցրեց Սողոմոնը, առանց ուշադրութիւն դարձնելու դայեակի խօսքերին։

—Ո՞վ կարող էր այստեղ մտնել. դրսի դուռը միշտ փակ է, պարտէզի պատը բարձր է, ահագին շները պահպանում են մեր տունը, դռներին այնպիսի փականքներ են շինուած, որ կարծես ամրոց լինի։ Ո՞վ կարող էր մեզ մօտ գալ։

—Մինոյն է։ Սառա, դու ոչինչ չես լսել կամ տեսել։

—Ի՞նչ պիտի լսէի, ես լսեցի բերդի ժամացոյցի հարուածը և տեսայ փողոցի սաստիկ խաւարը։

—Տան մէջ ոչ ոքի չես տեսել։

—Տէր իմ, կատակներդ մի կնդմթող, ոչ ժամանակ է և ոչ էլ վայել է։ Մեր խեղճ զաւակը դեռ էլի թմրութեան մէջ է։ Ես ուժից ընկայ, լաւ կ'անես գնաս նստես մօտը, իսկ ես գնամ միքիչ

աչքս կպցնեմ, ցաւից ու տրամաբթիւնից հանգստանամ։

—Լաւ, գնա, ասաց Սողոմոնը, մտածմունքի մէջ ընկղմած։

Եւ նա վերկացաւ, հագնուեց ու գնաց աղջկայ մօտ։ Երկար միջոց նստած էր նրա մօտ, մի ձեռքով բռնած Լիայի ձեռքը, իսկ միւսով ծիածանի գոյներով շողշողացող արկղիկը։ Նա խոր մտածմունքի մէջ էր ընկել։ Ահա թէ ինչ էր մտածում նա.

«Գցնել արկղիկը մարգարիտներով, նրանցից մի մանեակ շինել և կապել նրա վզից և նա ուշքի կը-գայ։ Լաւ, մինչև հիմա ես դեղօրայք էի շինում, ուսումնասիրում էի բնութեան զօրութիւնները և ջանք էի անում թափանցել նրա գաղտնիքների մէջ։ Ի՞նչ կայ. այս ես դուրս չի լինի իմ պարապմունքների շրջանից։ Կը սովորեմ մարգարիտներ պատրաստել։ Եթէ նրանք որոշ պայմանների մէջ գոյանում են ծովում, ուրեմն ինչու նոյն պայմանների մէջ մարդն էլ չկարողանայ պատրաստել նրանց։ Ես չեմ վախենայ տարիներ աշխատելուց, միայն թէ իմ Լիան փրկուի։ Չեմ ուտի, չեմ խմի, կուշտ չեմ քնի, այլ մարգարիտ շինել կը սովորեմ և միշտ փորձեր կ'անեմ։ Պարզ է, որ իմ տեսածը հասարակ երազ չէր, այլ տեսիլ։ Այս արկղիկը, որ յայտնի չէ թէ որ-

տեղից յայտնուեց իմ սեղանի վրայ, ինձ հաւաստիացնում է, որ բարի ոգին այցելեց ինձ և աղջկան փրկելու ճանապարհ սովորեցրեց։

Սողոմոնը մի անգամ էլ նայեց հրաշալի արկղի վրայ, որ շողշողում էր ծիածանի բոլոր գոյներով և պահեց նրան իր լայն գօտու մէջ։ Այն օրից սկսած նա երբէք չէր բաժանվում արկղից և սկսեց պարապել երիտասարդական աշխուժով։ Նա կարդաց դէպի Արևելք արուած բոլոր ճանապարհորդութիւնները, բոլոր քիմիական գրքերը, ուր իմիջի այլոց գրուած էր նաև ծովի ջրի բաղադրութեան մասին։ Յետոյ գնեց միքանի մարգարիտներ և նրանց իրանց բաղադրիչ մասերի վերլուծեց, ապա մանրամասնօրէն մի առ մի գրեց, թէ ինչ ու ինչ տարրերից էին բաղկացած նրանք. ամեն մի տարրի քանակութիւնը, յատկութիւնն ու քաշը ևս նշանակեց. յետոյ մեծ քանակութեամբ զանազան քիմիական բաղադրութիւններ գնելով՝ եռանդով ձեռք զարկեց գործին։ Լուսաբացից մինչև ուշ գիշեր նա կազմում էր, լուծում, եփում և զանազան ջրերի ու կրակի միջով զտում այդ բաղադրութիւնները, բայց և այնպէս ոչ մի արդիւնք չստացաւ—չկարողացաւ մարգարիտ շինել։ Նա շատ փող ծախսեց իսկական մարգարիտներ գնելու և նրանց վերլուծելու համար, կարծելով թէ

գուցէ սխալուել է նրանց բաղադրիչ մասերը նշանակելիս, սակայն բոլորն էլ իզուր։ Նա շատ հեշտութեամբ կարողանում էր մարգարիտը վերլուծել բաղադրիչ տարրերի, բայց այդ նոյն տարրերից կրկին մարգարիտ ստանալ նրան ոչ մի կերպ չէր յաջողվում։ Միքանի ամիս շարունակ տևեցին այս անօգուտ փորձերը և անխոնջ աշխատութիւնը, որոնք նրան ուժից զցեցին և ահագին ծախսեր պատճառեցին. վերջապէս նա յուսահատութեան մէջ ընկաւ և խոստովանուեց, որ բոլորն իզուր է, որ ինքն անկարող է մարգարիտ շինել։ Այնժամանակ նա վճռեց մի հեռաւոր ճանապարհորդութիւն կատարել. գնալ այն երկիրը, ուր բնութիւնը ծովի եղերքին մարգարիտ է արտադրում և այնտեղ նորից աշխատելով գուցէ կարողանայ մարգարիտ շինելու գաղտնիքը գտնել։ Սողոմոնը հաստատ բնաւորութեան մարդ էր. մի անգամ որ մի բան էր մտքին դնում, նա այլևս չէր տատանվում, այլ ամեն միջոց զործ էր դնում իր նպատակին հասնելու։ Նրա համար ծանր էր թողնել դեռ ևս անզգայ ընկած աղջկան. սակայն երբ մտածեց, որ նրա բժշկուելը իր ձեռնարկութեան յաջողութիւնից է կախուած, նա այլևս չվարանեց։ Հայրական քնքշութեամբ համբուրեց անխօս Լիային, յանձնեց նրան պառաւ Սառային, մի

պայուսակ կախեց ուսից, միւսը ջրու թարքից կապեց ու հեծաւ և տխուր ու անխօս դուրս եկաւ Գրէնադայից։

Ճանապարհին նա շատ նեղութիւններ կրեց. ծովի վրայ սարսափելի փոթորիկների հանդիպեց, ցամաքի վրայ անձրևների տակ ընկաւ, նեղուեց քամիներից ու անյարմար իջևաններից, համբերութեամբ տարաւ և՛ քաղց, և՛ ծարաւ. նրան արգելք չեղան ոչ անանցանելի անտառները, ոչ բարձր լեռները, ոչ խոր գետերը. նա դիմադրեց թէ այդ բոլոր արգելքներին և թէ յոգնածութեանը։ Եւ թէպէտ երկար նստական կեանքից յետոյ ծանր էր նրա համար այդ յոգնեցուցիչ ճանապարհորդութիւնը, բայց աղջկան փրկելու միտքը նրան նոր ոյժ էր տալիս։

Ամիսներ ճանապարհորդելուց յետոյ վերջապէս նա հասաւ մի կղզու, որի ծովափնեայ բնակիչները սուզուելով ծովի խորը, առատութեամբ մարգարտի խեցեմորթներ *) էին որսում։ Նա բընակութիւն հաստատեց խեղճ ձկնորսների մօտ, և նրանցից մարգարտի խեցեմորթներ գնելով, սկսեց ուշադրութեամբ քննել այն քարերը, որոնց մօտ նրանք գտնվում էին. գննեց և՛ ծովափնեայ մամուռապատ ժայռերը, և՛ ծովի յատակը ծածկող մամուռը։ Նրա սրատեսութիւնից ոչինչ չսպրտեց, նա հաւաքում էր թէ՛ քար, թէ՛ խոտ և թէ՛ մամուռ և կամ վերցնելով ծովի ջուրը, վրան զանազան դեղօրայք էր ածում և այդ բաղադրութիւնը դնում խեցեմորթի մէջ և կրկին եփում, և ապա դտում. բայց և այնպէս մարգարիտ չէր ստացվում։ Այնժամանակ նա մտածեց, որ ոչ թէ կրակը, այլ արևն է արտադրում նրանց, ուստի իր բաղադրութիւնները արևի կէսօրուայ կիզիչ ճառագայթների տակ դարաւ։ Սակայն այդ էլ զուր անցաւ։

Նա ոյժից ընկաւ, սաստիկ ջերմից բռնուեց, այնուամենայնիւ մարգարիտ չինել չկարողացաւ։ Այնժամանակ սաստիկ յուսահատութիւն տիրեց նրան։ Հասկանալով որ ամեն ջանք անօգուտ է, նա վճռեց վերադառնալ տուն։ «Գոնէ աղջկաս մօտ կ՚ապրեմ, մտածում էր նա, և եթէ ինձ վիճակուած չէ նպատակիս հասնել, գոնէ կ՚աշխատեմ նրա համար, նրա մօտ կը լինեմ, ամեն օր նրան կը տեսնեմ. թէպէտ նա անզգայութեան մէջ ընկած լինելով չէ լսում, չէ տեսնում ինձ, բայց գոնէ ես կը նայեմ նրան և նրա սիրելի դէմքի տեսքը կը-կրկնապատկէ աշխատելու եռանդս»։

Վերցնելով ծովի ջուր, քարեր, մամուռ և

*) Չրալին կենդանիներ են։

մարգարտի խեցեմորթներ, Սողոմոնն ուղևորուեց դէպի տուն, բայց չուզեց ծովով գնալ, որովհետև փոթորիկներից ու ծովի հիւանդութիւնից շատ էր տանջուել։ Նա վճռեց ցամաքով վերադառնալ։ Ուտելիքի ու ջրի պաշար վերցրեց, վարձեց մի ուղտ և մի առաջնորդի ուղեկցութեամբ՝ սկսաւ անցնել երկիրը ճանապարհ ընկաւ Սահարա անապատի միջով։

Արդեօք գիտէք թէ ինչ բան է Սահարա անապատը. դա մեր երկրագնդի վրայ եղած ամենասարսափելի տեղերից մէկն է։ Հաղիւ թէ բևեռային սառոյցները այնքան զարհուրելի լինեն, որքան այդ ընդարձակ անապատը։ Ամենայն տարածութեան վրայ չկայ ոչ ջուր, ոչ ծառ, ոչ թուփ և ոչ խոտ, այլ կայ միայն աւազ, աւազ, շարունակ աւազ։ Երկինքը եռացած երկաթի նման հրաշէկ է, ոսկու նման դեղին, իսկ արևը իր ուղղաձիգ ճառագայթներով այրում, տոչորում է ճանապարհորդին։ Նա լողում է ոսկէ-հրային երկնքում, իր փայլով կուրացնում, թուլացնող ջերմութիւնով այրում ուղևորին մինչև ոսկորների ծուծը. ոչ մի կտոր ամպ, ոչ մի թեթև զովացուցիչ հողմիկ։ Երեկոյեան դէմ արևի ճառագայթները հանգչում են, նա հրային գնտի նման անյայտանում է հորիզոնի ծայրին ոսկէ մշուշի մէջ, բայց զովութիւն դարձեալ չի լինում։ Կրակ կտրած աւազը գիշերուայ հովի փոխարէն ճնշող գոլ է արտադրում։ Եթէ քամի է բարձրանում, բոցի պէս այրում է։ Ձիկացած մանր աւազի հատիկները շնչառութեան հետ միասին թափանցում են չորացած կոկորդի, պայծառ լոյսից կուրացած աչքերի, քթի և բերանի մէջ ու իրանց տաք հատիկներով կսկսում ամբողջ մարմնին։ Անտանելի ծարաւը ընկճում է ճանապարհորդին. նրա աչքերը կսկծում են, նա ոչինչ չի տեսնում և յոգնած տեսողութիւնը հրաժարվում է նրան ծառայելուց։ Ամենափոքր ստուեր անգամ չի նկատվում ոչ մի տեղ. շորս կողմը ամեն բան լուսաւորում, այրում, տոչորում է և յաճախ ուժասպառ եղած ճանապարհորդը մեռնում է այդ հրային դաշտի մէջ։ Սողոմոնը սկզբում քաջութեամբ առաջ էր գնում, բայց այստեղ էլ նրա բաղդը չբաներ։ Բարձրացաւ միջօրէական երկնքին յատուկ խորշակը (տաք քամին), ալէկոծեց աւազի դաշտավայրն ու բարձրացրեց աւազի անթիւ ալիքներ։ Անապատը ծովի նման շարժուեց, տատանուեց. նրա վրայ սկսեցին կազմուել աւազի բարձր և խոր ալիքներ. մանր աւազի ամպեր բարձրացան օդի մէջ և պատեցին երկինքը, պայծառ հրեղէն մշուշը ծածկեց արևը, որ այլևս առանց փայլի,

հրաշէկ գնտի նման կանգնած, մինչի Սողոմոնի ոսկորներն էր թափանցում այդ կիզիչ, ոսկէ փոշու միջից։ Ուղտը քայլում էր ալէկոծուած աւազի վրայով, նրա երկար ոտները թաղվում էին տաք ալիքների մէջ։ Հետզհետէ աւելի էր ալէկոծվում աւազը, աւելի տաքանում օդը, որից էլ աւելի էր ծանրանում շնչառութիւնը և բթանում տեսողութիւնը։ Երկու քայլ հեռուն բացի հրային ոսկէ փոշուց այլևս ոչինչ չէր երևում։ Այդ մի սարսափելի բուք ու բորան էր, բայց ոչ թէ ձնի, այլ կրակ կտրած աւազի։ Կուրացած, ուժասպառ եղած Սողոմոնը իրան կազդուրում էր շարունակ ջուր կուլ տալով, բայց ջուրն էլ նրան չէր զովացնում. հէնց որ նա միքանի կաթիլ ջուր էր կուլ տալիս, իսկոյն էլի տաք աւազն այրում էր նրա կոկորդը։ Այս վտանգի մէջ, առանց մի բան տեսնելու, նա բաց թողեց ուղտի սանձը և իրան յանձնեց կենդանու բնազդին։ Վրայ հասաւ գիշերը, բայց նա էլ զովութիւն չբերաւ. չիկացած աւազը շարունակ մռնչում էր, ալէկոծվում և հրային մշուշի պէս վեր բարձրանում ու ծեփում Սողոմոնի երեսին և կսկծեցնում նրա աչքերը, քիթն ու չորացած շրթունքները։ Լուսադէմին քամին հանդարտուեց, բայց երբ կարելի եղաւ դիտել շրջակայքը և ընդարձակ անսահման անապատը, Սողոմոնը սարսափով նկատեց, որ իր առաջնորդն անյայտացել է ու ինքը մենակ է. արդեօք նա մեռել է, թէ ճանապարհը կորցրել—Ստուգած գիտէր։ Աւազի ալիքների անթիւ ու անհամար շարքերը ծառացած շարուած էին նրա շուրջը, այլևս ուրիշ ոչինչ չէր երևում։ Սողոմոնն իզուր էր լարում իր յոգնած տեսողութիւնը. նա տեսնում էր միայն աւազ, աւազ, տաք, այրող աւազ։ Սողոմոնը քշում էր յոգնած, տանջուած ուղտին, որ շատ դանդաղ էր առաջ շարժվում... Բայց ահա հեռուում բծի նման մի ինչ-որ բան երևաց. հաղիւ նշմարելի քար, բլրակ կամ հողակոյտ լինէր կարծես, որ սեին էր տալիս անապատի ոսկէ տափի վրայ։ Սողոմոնը ցնցուեց և ուղտը քշեց դէպի այն կէտը։ Մի քիչ յետոյ, երբ աւելի մօտեցաւ, տեսաւ որ աւազի վրայ մի ուղտ էր ընկած։ Ենթադրելով թէ այդ իր առաջնորդի ուղտն է, նա շտապեց մօտենալ, բայց նրա աչքերի առաջ բացուեց մի անակնկալ զարհուրելի տեսարան։ Աւազի վրայ սատկած ընկած էր մի ուղտ՝ դունչն ու երկար ոտները խղճալի կերպով ձգած, իսկ նրա ոտների մէջ, նրա փորին կուչ եկած նըստած էր մի կիսակենդան կին՝ մեռելի նման գըժգոյն. կապուտկած, չորացած շրթունքները բաց-

ուած էին, որոնց արանքից երևում էին մահուան տագնապով սեղմուած երկու շարք սպիտակ ատամներ։ Նրա գրկում քնած էր իր միամեայ մանուկը։ Սողոմոնը կարեկցութիւնից դրդուած իջաւ ուղտից և մօտեցաւ կնոջը, որ տեսնելով նրան սառսռաց և ուզեց բարձրանալ, բայց ուժասպառ կրկին ընկաւ սառած ուղտի վրայ։ Նա աշխատում էր մի ինչ-որ բան ասել և հաւաքելով վերջին ոյժերը, արտասանեց հազիւ լսելի ձայնով.

— Երեխայի՜ս... ազատիր... ես մեռնում եմ... թող ես.. մեռնեմ այստեղ, միայն թէ ազատիր նրան...

Սողոմոնը լուռ էր. ինչպէս վերցնէր ծծկեր երեխային. ինչ անէր, ինչով կերակրէր. նրա մօտ մնացած կերակրի պաշարը սակաւ էր, իսկ ջուրն աւելի սակաւ. նա հասկանում էր, որ այդ հանգամանքներում դժուար թէ ինքն ազատուի, ուր մնաց որ ուրիշին, օտարի որդուն ազատէ։

—Բայց ես անկարող եմ դրան ազատել, պատասխանեց Սողոմոնը. մենք երկուսս էլ կը մեռնենք. ջրիս պաշարը շատ քիչ է, մեզ բաւական չի լինիլ, հազիւ ինձ բաւականանայ։ Ես ճանապարհս կորցրել եմ. չգիտեմ թէ ուր եմ գնում. իմ առաջնորդը կամ մեռաւ, կամ ինձ լքեց ու հեռացաւ. ինչպէս վերցնեմ երեխային. կեանքումս խնամած

չեմ ծծկեր մանուկներ, նրանց հետ վարուելու եղանակը չգիտեմ, վերջապէս նրան ինչ պիտի ուտացնեմ կամ խմացնեմ։

—Ազատիր...ազատիր նրան, կրկնում էր խեղճ մայրը,— և ես կ'օրհնեմ քեզ, քո սերունդը, քո մանուկներին։ Դու բարի գործ կ'անես, Աստուած քեզ կ'օրհնէ։

— Բայց ես անկարող եմ, ասաց Սողոմոնը. հասկացիր, որ իմ ունեցած ջրի պաշարը երկուսիս չի բաւականանայ. երեխադ չի ազատուիլ ու ես էլ կը մեռնեմ։

Եւ Սողոմոնը չկամենալով լսել մեռնողի ապերսանքը, ինքն իրանից վախենալով, երկիւղ կրելով թէ կը զիջանի նրա աղերսին, շտապով հեծաւ ուղտը, մտրակեց նրան և առաջ գնաց։ Նրա յետեւից լսուեց մի թոյլ, բայց սիրտ պատառող հառաչանք։ Նա չկարողացաւ տանել այդ հառաչանքը. արագութեամբ յետ դարձրեց ուղտը և առանց մոտենալու, այլ միայն զգալով մի անբացատրելի, սրտի խորքը թափանցող գութ՝ վայր թռաւ ուղտից, մի ոստիւնով կանգնեց մեռնող կնոջ մօտ և ասաց շտապով.

— Տուր ինձ երեխադ. կամ նրան կ'ազատեմ, կամ կը մեռնեմ նրա հետ միասին։

Կինը մեկնեց նրան իր դժգոյն մանուկը, վերջին անգամ նայեց նրան անսահման սիրով, յետոյ նրա մարող հայեացքը կանգ առաւ Սողոմոնի վրայ։ Արտասուքի երկու խոշոր կաթիլներ երևացին նրանց մէջ և կամացուկ գլորուեցին այտերի վրայից։ Նա ուժասպառ ընկաւ երեսի վրայ, աչքերը լայն բացուեցին և նա փչեց իր վերջին շունչը։ Սողոմոնը ծանր հառաչեց, նստեցրեց երեխային ծնկների վրայ և ճանապարհը դէպի արևմուտք ուղղելով՝ առաջ գնաց։

Երեխան երկար չընեց. նա զարթեց և լաց եղաւ։ Սողոմոնը ջրամանը գոտկից հանեց և առանց մտածելու, որ ջուրը սակաւ է և իրան էլ չի բաւականանալ, տուաւ նրան որ ուզածին չափ խմէ։ Երեխան սկսեց ագահութեամբ խմել. Սողոմոնը չէր կշտանում նրան նայելուց և ինքն էլ խմում էր բարի զգացմունքների կենսատու ջուրը։ Կեանքի մէջ առաջին անգամն էր, որ գութը մուտք գործեց նրա սրտի մէջ և հետը բերաւ սէր, սէր դէպի Աստծու արարածը, սէր դէպի մերձաւորը։ Այո, նա արդէն սիրում էր երեխային, որին ազատում էր անգութ մահի ճիրաններից։

Կուշտ խմելուց յետոյ երեխան կրկին քնեց։ Կազդուրուելով նորից զարթեց և մօրը չտեսնելով,

սկսեց լալ։ Սողոմոնը չգիտէր թէ ինչով մխիթարէ նրան. ցոյց էր տալիս նրան մերթ իր փայլուն դաշոյնը, մերթ հրացանի կոթը, մերթ գոտու փունջը, բայց մանուկը դրանցով չէր զուարճանում և շարունակ լալիս էր ու լալիս։ Թէև Սողոմոնը երեխայ պահելու շնորք և հմտութիւն չունէր, բայց սիրով էր կատարում դայեակի պարտաւորութիւնները. նա մխիթարում էր նրան բարի, քաղցր խօսքերով և վերջապէս շոշափելով իր գոտին, մեքենայաբար ձեռքն առաւ փայլուն օղալ արկղիկը և ցանկանալով երեխային զբաղեցնել, ցոյց տուաւ նրան։ Մանուկը նրա վրայի ծիածանի նման փայլուն գոյներից հրապուրուած՝ յափշտակեց այն ու սկսեց հետը խաղալ. այլևս լաց չեղաւ։ Սողոմոնը նայում էր երեխային գթոտ, բարի հայեացքով. իր մէջ նա վճռեց, որ բոլոր ջուրը նրան կը խմացնի, բոլոր կերակուրը նրան կ'ուտացնի, առանց իր մասին հոգալու։ Այդ րոպէին նրան զարմացրեց մի օտարոտի ձայն. արկղիկի մէջ ինչ-որ բան ճնղճնդում և դէսուդէն էր գլորվում։ Սողոմոնը առաւ արկղը մանկան ձեռքից, բաց արաւ և մնաց ապշած։ Նրան տիրեց թէ երկիւղ, թէ ուրախութիւն և թէ տարակուսանք միաժամանակ. արկղի մէջ երկու խոշոր ու սքանչելի փայլ ունեցող մարգարիտ կար։

—Այս որտեղից են սրանք, բացականչեց Սողոմոնն ակամայ։

«Դրանք երախտագիտութեան արտասուքներ են»,—լսուեց նրա ականջին երգի նման քաղցր, երաժշտութեան նման ներդաշնակ մի ձայն։ — Մխիթարիր թշուառներին, որբերին, ազատիր գերիներին իրանց տանջանքից, և նրանց երախտագիտութեան արտասուքները կը կազմեն մանեակ, որ եթէ աղջկադ վզիցը կախես, նա կըսթափուի և դույետ կըստանաս քո աղջկան»։

Սողոմոնը ճանաչեց բարի ոգու ձայնը և հասկացաւ, որ մերձաւորներին ազատելով, նա կարող է փրկել իր աղջկան։ Ցուսով լցուած, նա մտրակեց ուղտին և աշխուժութեամբ առաջ գնաց։ Ճուտով նա հանդիպեց մի կարաւանի և իր ազատած երեխայի հետ միասին անապատից ողջ դուրս եկաւ։ Նա հաստատապէս մտքին դրաւ որդեգրել նրան և հարազատ որդու նման դաստիարակել։

Սողոմոնը Գրէնադա վերադառնալիս թէ կարաւանի մէջ, թէ Թունիսում և թէ միւս քաղաքներում ու երկրներում, որոնց միջից պիտի անցնէր, ոչ միայն օգնում էր իրան պատահող կարօտեալներին ու հիւանդներին, այլ շպատահած ժամանակ սրոնում և գտնում էր նրանց։ Նա դադարել էր ոսկի կիտելու. ունեցածը բաժանում էր աղքատներին, բժշկում հիւանդներին, օգնում թշուառներին, գերիներին ազատում ծանր բանտարկութիւնից՝ վճարելով նրանց փրկանքի գինը, ստրուկներին գնում էր անխիղճ տէրերից. մի խօսքով՝ կատարեալ բարի մարդ դարձաւ։ Օգնելով կարօտ մարդկանց, նա հետզհետէ սովորեց եղբօր նման սիրել նրանց։ Թէև աղջկան շուտ տեսնելու ցանկութիւնը նրա մէջ բուռն էր, բայց նա յաճախ միտքը դրածից աւելի երկար էր մնում մի քաղաքում կամ աւանում՝ մի խեղճի դժբաղդութիւնից ազատելու կամ մի հիւանդ բժշկելու համար։ Նրա արկղիկի մէջ մարգարիտներն արագ-արագ բազմանում էին, և շուտով նրանց թիւն այնքան մեծացաւ, որ նրանցից կարելի էր շինել թանկագին երկար մանեակ։ Երբ Սողոմոնն սկսեց մարդկանց սիրել և բարի գործերի քաղցրութիւնը ճաշակեց, այնուհետև բոլորովին նուիրուեց բարեգործութեան և շտապելով աղջկայ մօտ հասնել, չէր թողնում իր մեծ և օրհնեալ գործունէութիւնը։

Մարդ որքան շատ բարեգործութիւն է անում, այնքան աւելի է ցանկանում բարիք անել. որքան շատ է սիրում, այնքան աւելի բաղդաւոր է զգում իրան։ Սողոմոնն զգում էր այնպիսի հանգստութիւն, ներ-

քին անդորրութիւն ու հոգեկան այնպիսի խաղաղութիւն, որ ինքն էլ չէր հասկանում թէ առաջ ինչպէս էր կարողանում ապրել՝ բացի ոսկուց և աղջկանից ուրիշ ոչ ոքի չսիրելով։

Վերջապէս Սողոմոնը հասաւ Գրէնադա։ Նա ինքն իրան նորոգուած, վերածնուած ու բաղդաւոր էր զգում։ Ուրախութիւնից դողդողալով նա ոտ դրաւ իր տան շեմքին. իսկոյն Սառան դուրս թռաւ նրան դիմաւորելու, իսկ նա առաջուանից տարբեր կերպով ողջունեց նրան.

—Ողջոյն քեզ, իմ բարի, սիրելի Սառա, ասաց նա.—ահա ես էլ վերադարձայ բաղդաւոր յոյսերով լի։ Իսկ դու, սիրելիդ իմ, մեր հիւանդին խնամելուց բոլորովին ուժից ընկել ես։ Սպասիր, Աստուած քեզ կ'օրհնէ աղջկաս վրայ ունեցած սիրուդ համար։

Սառան զարմանքից կանգ առաւ. առաջ նա դաժան ծերունուց ոչինչ չէր լսած բացի տրտունջ-վնթվնթոցից և խիստ հրամաններից։ Բայց նրա զարմանքն աւելի մեծ եղաւ, երբ նա թափանցող հայեացքով դիտեց նրան։ Սողոմոնի դէմքը բոլորովին ուրիշ արտայայտութիւն էր ստացել. նա պարզուել էր, նրա քաղցր աչքերը սիրալիր կերպով էին նայում և երբեմն սեղմուած խիստ շրթունքները այժմ անկեղծօրէն և սիրով ժպտում էին իրան։

—Տէր իմ, ասաց Սառան, քո դէմքից տեսնում եմ, որ Աստծու շնորհը քեզ այցելութիւն է արել, որ Աստծու օրհնութիւնն իջել է քեզ և քո տան վրայ։

—Տար ինձ աղջկաս մօտ, պատասխանեց Սողոմոնը սրտաշարժուած և աչքերն արտասուքով լի։

Նա ներս մտաւ Լիայի ննջարանը։ Լիան առաջուայ նման անխօս և անշարժ պառկած էր անկողնու վրայ։ Սողոմոնը խոնարհուեց դէպի նա, արտասուքը հեղեղի նման սկսեց հոսել նրա բարի աչքերից։ Դողդոջուն ձեռքերով նա կախեց մարգարտէ մանեակը աղջկայ վզից։ Լիան բացեց իր գեղեցիկ աչքերը, մեկնեց նրան ձիւնափայլ ձեռքերը և փարուեց նրա վզին ու դէմքը սեղմեց նրա կրծքին։ Հայր և աղջիկ ամուր գրկախառնուեցին և չափազանց բաղդաւորութիւնից ուրախութեան արտասուքներ թափեցին։

Սողոմոնը, իր աղջիկը, իսկ յետոյ նաև նրա որդեգիրը շուտով ամբողջ Գրէնադային սիրելի դարձան և վայելում էին ընդհանուր յարգանք։ Նրանք կարօտ ընտանիքներին օգնում էին, հիւանդներին բժշկում, թշուառներին մխիթարում, գերութեան մէջ տանջուողների ազատութեան մասին մտածում ու իրանք էլ ապրում էին երջանիկ ու անկարիք։

Սողոմոնը գիտութիւնն ու հարստութիւնը ծա-

ռայեցնում էր միմիայն իր մերձաւորների օգտին։ Նա յաճախ ասում էր.

«Ո՛րքան մարդ աւելի հարուստ լինի, այնքան աւելի պարտական է բարեգործութիւն անել. մեր ունեցած հարստութիւնը Աստծու շնորհած մի պարգևն է, որ Նա յանձնել է մարդուն՝ իր մերձաւորներին, կարիք ունեցողներին օգնելու համար, իսկ ուսումն ու գիտութիւնն էլ նոյն հարստութիւններն են. հետևապէս նրանց ևս պէտք է բաժանել բոլորի մէջ, գործ ածել մարդկանց և մերձաւորների օգտի համար, որովհետև բոլոր մարդիկ մեր եղբայրներն են և մի Աստծու որդիք»։

ՎԵՐՋ

ԳԻՒՂԱՑԻՆ ԵՒ ԷՇԸ

Մի գիւղացի իր որդու հետ տօնավաճառ գնաց մօտակայ քաղաքը, և որպէսզի վերադարձին ստիպուած չլինեն իրանք շալակելու գնած ապրանքը։ Իրանց էշն էլ հետները տարան։

Ճանապարհը սաստիկ ցեխ էր. գիւղացին իր որդու հետ գնում էր ոտքով ու էշի սանձը բռնած քաշում իր ետևից։

Անցորդի մէկը տեսնելով այդ, ասում է.

—Եթէ ես քո տեղը լինէի, այս ցեխին կօշիկներս չէի փչացնիլ, քանի որ էշը առանց բեռի է և դատարկ։

—Լաւ. ես ասում, ասաց գիւղացին ու նստեց էշին, իսկ որդին ոտով հետևեց հօրը։

Իսկ մի ուրիշ անցորդ տեսնելով այդ, ասում է.

—Չես ամաչում, ա՛յ մարդ—որ քնքդ նստել ես էշին ու խեղճ տղային թողել ոտով քաշ դալու։

«Ճիշտ որ, մտածեց գիւղացին, որդիս յոգնած կըլինի», և ապա իջնելով՝ որդուն նստացրեց իր տեղը։

Հազիւ էին նրանք մի հարիւր քայլ գնացել, որ մի երրորդ անցորդ հանդիպելով՝ ասում է.

ՕԳԼ

—Ի՛նչ հաստագլուխ—անհասկացող մարդ ես. մի՞թէ այդքանն էլ չես հասկանում, որ աղայիդ հետ նստես իշին և իզուր տեղը ցեխ չկոխ տաս։ Ինչպէս երևում է ցեխի մէջ քաշ գալը ախորժելի է քեզ։

—Դու էլ ես ուղիղ ասում, ախպէր, մանաւանդ որ էշը սովոր է զանազան ծանրութիւններ կրելու իր մէջքին, ասաց գիւղացին ու երկուսով միասին նստեցին իշին։

Բայց հէնց որ քաղաք մտան հայր ու որդի իշին նստած, ամեն կողմից ժողովուրդը շրջապատեց նրանց ու սկսեց լանդիմանել.

—Ի՛նչ անգութ մարդիկ էք. ձեզ համար հանգիստ ու առօք-փառօք նստել էք, բայց խակի տէրն էլ չէք որ ողորմելի անասունը հաղիւ է կարողանում ոտները փոխել։ Աստենք խեղճը լեզու չունի, որ բողոքի, բայց դուք հօ խելք ունէք, ինչու՞ չէք մտածում... թիւ...

Ու սկսեցին հայհոյել, ծաղր ու ծանակ անել խեղճերին, որոնց միակ յանցանքն այն էր, որ իրանց նկատողութիւն անող մարդկանց խելօք էին համարել և նրանց խորհրդին հետևել՝ առանց իրանց լսածը ծանր ու թեթև անելու։

—Ա՛խ, Տէր Աստուած,—բացականչեց չփոթուած ու շուարուած գիւղացին,—միայն մի բան մնաց անելու, այն է՝ ինքս շալակեմ իշիս և այդպէս տանեմ ու իսկոյն ծախեմ և միանգամից ազատուեմ իզուր նախատինքից։

—Ո՛չ, հայրիկ,—առարկեց որդին,—շալակելով շալակիր, եթէ կարող ես, բայց մի ծախիր, ապա թէ ոչ՝ մեր գնելիք ապրանքը յետոյ ինքներս պէտք է շալակենք։

1140

Հայրը ծիծաղեց և ասաց.

—Դու ամենքից ուղիղն ասացիր, որդի. ես իզուր տեղը տաքացայ։ Մարդ չպէտք է առաջին պատահածի խորհրդին հետևէ. ամեն մարդ ինքն է իր սեպհական գործի տէրը. ոչ ոք իրաւունք չունի խառնուելու ուրիշի գործերի մէջ։ Գնանք, սիրելիս, գնանք մեր առուտուրն անենք, իշին բարձենք, տուն վերադառնանք։ Աստուած փրկի ու ազատի մեզ այն մարդկանցից, որոնք իրանց այնքան խելօք են կարծում, որ իրանց համարքնում են, բայց ուրիշների համար երազ տեսնում։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A Публичная Библиотека
7/XI. 1922
именна. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.

Վաճառվում է «Գուտենբերգ» գրախանութում.
Тифлисъ, Дворцовая д. Лалаева, Книжный магазинъ „Гуттенбергъ“.

Այս գրքի լեզուն, ուղղագրությունը հաւանողները եթէ գիրք ունեն սրբագրելու, թո՛ղ դիմեն վերոյիշեալ գրախանութին։

349